«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ N 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Գրականություն

Մասնակից՝ Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցի ուսուցիչ Նինա Գևորգյան

Թեմա՝ Դանիել Վարուժանի ստեղծագործությունների ուսուցումը 8-րդ դասարանում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Գլուխ 1. Դպրոցականների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացումը Դ. Վարուժանի ստեղծագործությունների ուսուցման ընթացքում
3. Գլուխ 2. «Զոն» բանաստեղծության ուսուցումը ոչ ֆորմալ եղանակով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներով
4. Եզրակացություն
5. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Ժամանակակից կրթության համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մոտեցում հանդես բերել գրականության ուսուցման մեթոդաբանության նկատմամբ: Նոր տեխնոլոգիաների և համացանցի օգտագործումը զգալիորեն ընդլայնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման և յուրացման հնարավորությունները: Ժամանակակից դպրոցի ուսուցչին վերապահվող կարևոր խնդիրը սովորողների կրթության բովանդակության կազմակերպումն է, նրանց ճանաչողական, սոցիալական և անհատական կարողություններն ու հմտությունները ձևավորելն ու զարգանելը: Այս համատեքստում առավել կարևոր է դառնում նրանց ստեղծագործող անձի ձևավորման գործընթացի նպատակադրված, համակարգված և արդյունավետ իրականացումը:

Սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացման համար պահանջվում են նոր տեխնոլոգիաներ, յուրահատուկ մեթոդների կիրառում, որն էլ պարտադրում է ուսուցման նոր ձևեր, ուղիներ ու եղանակներ:

Գրականության դասերը ստեղծագործելու հնարավորություն են ընձեռում սովորողներին, զարգացնում գեղագիտական ճաշակը, երևակայությունը, ինչպես նաև խառնվածքը, բնավորությունը, զգացմունքները, հետաքրքրությունները: Ուղղակի պետք է կարողանալ գտնել, ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք կշարժեն մատաղ հոգիների ստեղծագործ լարերը: Խաղային բնույթի դասերը գրավում են սովորողներին: Այստեղ տեղին է հիշել Էդվարդ դե Բոնոյի հետևյալ միտքը. «Շաբլոն մտածող մարդիկ ամաչում են խաղից, մինչդեռ եթե կա ամաչելիք ինչ-որ բան, ապա դա խաղալ չկարողանալն է»[1]:

Դանիել Վարուժանն այն բանաստեղծներից է, որոնք դուրս են գալիս ազգայինից և գնում դեպի համաշխարհային գրականության սահմանները: «Նա առյուծների զարմից է, նրա լեզուն հմայում է ամեն ինչ համախմբելու զորությամբ: Նա ծարավ է ամեն ինչի: Նա սիրում է ամեն ինչ փորձել: Նա միշտ պայքարում է իր սեփական սահմանները լայնացնելու համար, նվաճում է միայն իր գամմաները, ոչ ոքի պես չի

[1] Էդվարդ դե Բոնո, Ոչ շաբլոն մտածողության մասին, Եր., 1982, էջ 101

նվագում»,- ասել է ֆրանսիացի քննադատ Լուք – Անդրե Մարսելը։ Դանիել Վարուժանի ստեղծագոր-ծությունների ուսուցումը նպաստում է սովորողների գեղագիտական ճաշակի, բարոյական որակների ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը։

Նպատակը և հետազոտական հարցը – Ինչպես կազմակերպել «Զոն» բանաստեղծության ուսուցումը ոչ ավանդական եղանակով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներով։

Թեմայի կարևորությունը և նշանակությունը – Թեմայի կարևորությունն առնչվում է հայ գրականության, մասնավորապես Դ. Վարուժանի ստեղծագործությունների միջոցով սովորողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացման անհրաժեշտությանը, որը կարելի է իրականացնել նաև ոչ ավանդական եղանակով, մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ։

Ո՞ր առանցքային կարողունակություններին է ուղղված նպատակի ուսումնասիրությունը – Լեզվական, մշակութային, սովորել սովորելու, մեդիա, ինքնուրույնություն, քննադատական մտածողություն, վերլուծելու կարողություններ, թիմային աշխատանքի հմտություններ։

Գլուխ 1. Դպրոցականների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացումը Դ. Վարուժանի ստեղծագործությունների ուսուցման ընթացքում

Մերօրյա մանկավարժի խնդիրն է սովորողի համար ստեղծել ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ նա կարողանա ազատ մտածել, իր գործունեությունն ինքնուրույն կազմակերպել, միևնույն երևույթի վերաբերյալ տարբեր տեսակետներ արտահայտել, այդ երևույթները համեմատել՝ հիմնվելով օրինաչափությունների, օրենքների և փաստերի իմացության վրա, կարողանալ սեփական դիտարկումների և ուրիշի փորձի հիման վրա իր կարծիքը ձևակերպել և հիմնավորել: Այս բոլոր գործընթացներն ուղղված են մի նպատակի՝ բացահայտել անձի մտավոր ներուժը՝ միաժամանակ զարգացնելով նրա մտածողությունը: Ուսուցչի ծավալած գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի իմացական կարողությունների և ստեղծագործական որոնումների շրջանակը, այլ ընդհակառակը՝ հնարավորություն տա նրան նորը փորձելու, բացահայտումներ անելու, իր գործունեությունը ինքնուրույն կազմակերպելու՝ ցուցաբերելով ինքնադրսևորման և ինքնազարգացման կարողություններ: Աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացման համար օգտագործվում են տարբեր ուսուցողական-ճանաչողական խաղեր, հանելուկներ, ժամանցային և ոչ ստանդարտ խնդիրներ:

Ժամանակակից հետազոտություններում ստեղծարարության ուսումնասիրումը փաստացի ընթանում է երեք ուղղություններով՝

- Անհատական տարբերությունների (Ջ. Գիլֆորդ, Դրուժինին),
- Զարգացման գործընթաց (Դ. Դյուի),
- Խնդրի լուծման գործընթացի ուսումնասիրում (Է. Գրին):

Ստեղծագործական և վերլուծական կարողությունների զարգացումը կդառնա անփոխարինելի գործիք մասնավորապես 8-րդ դասարանում հայ գրականության ուսուցման ընթացքում՝ նոր գաղափարներ ստեղծելու և անձնական մրցունակության բարձրացման գործում: Ասոցիատիվ մտածողությունը զարգացնելու համար կա մի հիանալի արտահայտություն, որը ճշգրիտ փոխանցում է ստեղծագործական

գաղափարը՝ այն է «մտածեք տուփից դուրս»։ Հայտնի հոգեբան Մասլոուն ասել էր,որ ստեղծարարությունը բնորոշ է բոլոր մարդկանց, բայց այն կորչում է հասարակության մեջ վարքի և մտածողության հաստատված նորմերի ազդեցության պատճառով։ Սթիվ Ջոբսը գտնում էր, որ ստեղծարարությունը ոչ այլ ինչ է, քան տարբեր իրերի միջև կապ գտնելը։

Ստեղծարարության զարգացման միջոց է Մ. Խոլոդնայայի առաջարկած ԿՆՍԻՅ համակարգի գործառնությունը։

- Կ-կարողունակություն, սա գիտելիքի կազմակերպումն է, որն ապահովում է արդյունավետ որոշումների կայացում։
- Ն-նախաձեռնություն, սա նոր ինֆորմացիա փնտրելու և սեփական գաղափարներն առաջարկելու գործընթաց է։
- Ս-սուբյեկտիվ, սա նորի ստեղծման գործընթաց է։
- Ի-ինքնակարգավորում, սա սեփական գործողությունների կառավարումն է։
- Յ-յուրահատկություն, սա անհատական, ինտելեկտուալ մոտեցման ցուցաբերումն է։

Հայ գրականության դասերին ստեղծարարության զարգացման հիանալի միջոցներ են հետևյալ գործողությունները՝

- Աշխատել Դանիել Վարուժանի բանաստեղծությունների վրա, վերլուծել դրանք։ Այսպիսի աշխատանքի նպատակը երեխաներին դասական գործերին ծանոթացնելն է ։ Հիմնական շեշտը պետք է դրվի այն հանգամանքին, որ երեխաները ձգտեն արտահայտել իրենց հույզերն ու զգացողությունները։ Ֆրանսիացի մաթեմատիկոսներ Պոինքարն ու Հեյդմրդը առանձնացրել են ստեղծագործական գործընթացի չորս փուլեր.
    1. Նախապատրաստական փուլ-խնդիրը սովորական ճանապարհով լուծելու փորձ։
    2. Ինկուբացիոն ժամանակահատված։ Սովորական մեթոդները չեն օգնել, առաջադրանքը հետաձգվում է, անցնում ենք այլ փորձերի։
    3. Լուսավորություն, նույնն է թե փայլատակում։ Պատասխանը հանկարծ առաջանում է ենթագիտակցությունից։

4. Ստուգում։ Ընդունելության և համապատասխանության համար գտնված լուծման համապարփակ վերլուծություն։

Ստեղծարարության զարգացումը հանգեցնում է մտածողության որակական փոփոխությունների, նոր վերլուծությունների ու ռազմավարությունների, ինչը հնարավոր է խթանել համապատասխան մեթոդներով։

Ստեղծագործական գաղափարների խրախուսումը սեփական նախաձեռնությունները կյանքի կոչելու, ստեղծարար միտքը կատարելագործելու գործուն ուժ է, որի իրականացումը պետք է խթանվի։ Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, փորձ կատարելու մշտական ձգտումը, ճշմարտության ինքնուրույն բացահայտումը հատուկ է վառ երևակայությամբ օժտված և էներգիայով լեցուն երեխաներին, ուստի ուսուցչից պահանջվում է այդ էներգիան ուղղորդել երեխայի մեծ նպատակի իրականացմանը։ Ուսուցչի դերը հատկապես կարևորվում է սովորողների ներուժը զգալու, օժտվածությունը գնահատելու և նոր հնարավորություններ տեսնելու գործում։ Մանկավարժության մոտեցումների կարևորությունը դասավանդման մեջ կայանում է գիտելիքներ փոխանցելու արդյունավետ ուղիների որոնման, ուսումնական պլանի չափորոշիչների մշակման, լրացուցիչ ռեսուրսների առկայության, ուսուցիչների կրթության ոլորտում վերապատրաստումների, աշակերտների կրթական կարիքները հաշվի առնելու, ակադեմիական արդյունքների հասնելու վերջնանպատակի մեջ[2]։

Դասասենյակն այն դինամիկ միջավայրն է, որը միավորում է տարբեր ունակություններով անհատականությունների։ Արդյունավետ ուսուցումը պետք է բավարարի սովորողների անհատական կարիքները։ Լավ ուսուցիչը իր լսարանային պրակտիկայի ընթացքում օգտագործում է մի շարք ուսուցման ռազմավարություններ։ Նշենք մի քանիսը.

- Վիզուալիզացիա՝ տեսողական և գործնական ուսուցմա փորձառություն։
- Համագործակցային ուսուցում, որը սեփական գաղափարները բանավոր արտահայտելու, հաղորդակցման և քննադատական մտածողության

[2]Effective Pedagogical Approaches https://evelynlearning.com/

հմտությունները զարգացնելու հնարավորություն է տալիս։

- Հարցման վրա հիմնված ցուցումներ։ Մտածված հարցերը, որոնք ոգեշնչում են սովորողներին, խրախուսում հարցեր տալու, իրենց եզակի տեսակետն արտահայտելու վստահությունը։
- Տարբերակում։ Առաջադրանքները պետք է կազմել աշակերտների ուսումնական յուրահատուկ կարիքների համաձայն։ Սա կարող է վերաբերվել աշակերտների առանձին խմբերի տարբեր բարդության աշխատաթերթեր հանձնելուն։ Նման կրթական գործիքի օգտագործումը կարող է ժամանակ խնայել և հեշտությամբ պարզել ուսման բացերը դասարանում։
- Ինտերակտիվ գրատախտակների կամշարժական սարքերի օգտագործում։ Սա դասը գրավիչ դարձնելու և նոր հասկացությունների տիրապետելու հիանալի միջոց է։
- Վարքագծի կառավարում։ Վարքի կառավարման արդյունավետ ռազմավարության իրականացումը կարևոր է սովորողների հարգանքին արժանանալու համար։ Աղմկոտ, խանգարող դասասենյակները չեն խրախուսում արդյունավետ ուսումնական միջավայրի ստեղծումը։ Ուստի փոխադարձ հարգանքի մթնոլորտում, կարգապահության և խրախուսանքի համադրությամբ կարող է ստեղծվել այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, որն օգտակար կլինի ինչպես ուսուցչի, այնպես էլ նրա աշակերտների համար[3]։

Արդյունավետ ուսուցումը ուսուցչին ուղղված մարտահրավեր է, որ սկսվում է գիտելիքների բովանդակային փոխանցման համար անհրաժեշտ ուղիների որոնումից։ Դա հմտություն է, որ անընդհատ ջանքերի ու շարունակական վերագնահատման արդյունքում է ձևավորվում։ Նշենք մի քանի որակներ, որոնք հատկապես գրականության ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղիներ են.

[3]Effectiv Teaching Strategies For The Classroom
https://www.quizalize.com/blog/2018/02/23/teaching-strategies

- Ոգեշնչում-ներշնչանք։ Ուսուցչի խանդավառությունը պետք է համապատասխանի աշակերտների հետաքրքրություններին։ Էներգիայի բարձր մակարդակը, սերը դասավանդվող առարկային նկատմամբ պետք է արտահայտվի ուսուցչի վերաբերմունքի, ձայնի և ինտոնացիայի մեջ՝ յուրաքանչյուր դաս ներկայացնելիս։ Հարկավոր է ճանաչել և գնահատել սովորողների անհատական որակները, հարգել նրանց մտքերն ու կարծիքները, նույնիսկ եթե այդ մտքերն ու կարծիքները դժվար է տեղավորել սեփական համատեքստում։ Պետք է շնորհակալություն հայտնել նրանց մասնակցության համար՝ մնալ բաց և ընկալունակ, ողջունել ու գնահատել աշակերտի պատրաստակամությունը։ Դասավանդելիս շատ կարևոր է նաև հումորի զգացումը պահպանելը և հաղորդակցությունը հեշտացնող բառապաշար օգտագործելը։
- Պատրաստվածություն-քրտնաջան աշխատանք։ Դասավանդելը ծանր գործ է։ Դա պահանջում է պլանավորում, կազմակերպում և գնահատում։ Սկսեք կառուցել դասի պլան, մշակեք դասի ծրագիր, որը կուղորդի ձեր ուսուցման նպատակների իրականացումը։ Դասավանդման համար ընտրված ուսումնական գործողությունները պետք է հաճույք և հետաքրքրություն առաջացնեն սովորողների մեջ։ Դրանք պետք է ներառեն մեկնաբանելու, համեմատելու և վերլուծելու տեխնիկաներ։
- Հեռանկար։ Մարտահրավեր նետեք նրանց՝ առանց վախեցնելու։
- Համառություն։ Ամեն անգամ, երբ դաս եք պլանավորում, աշխատեք այն դարձնել ավելի մասնակցային, ավելի գրավիչ և ավելի հետաքրքիր։ Սովորեք սովորեցնելու հմտություններ, փորձեք նոր մոտեցումներ, փոփոխություններ կատարեք և կրկին փորձեք։
- Արտացոլում։ Քննեք ձեզ, եղեք հեռատես, բաց հարցեր տվեք այն մասին, թե ինչպես կգնահատեին աշակերտները ձեր դասավանդման ձևը։ Մի՛ խնդրեք հաճոյախոսություններ, քննադատություններ խնդրեք, քանի որ դասվանդումը մշտական կատարելագործում պահանջող աշխատանք է[4]։

[4]PedagogicalTechniques for Being a More Effective Teachet https://www.museum-ed.org/

Գլուխ 2.«Զոն» բանաստեղծության ուսուցումը ոչ ավանդական եղանակով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներով

Ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիներ որոնում են ամբողջ աշխարհում: Արդյունավետ ուսուցման հիմնախնդիրները քննարկվում և վերլուծվում են՝ հոգեբանության, ինֆորմատիկայի և ճանաչողական գործունեության կառավարման տեսության վերջին նվաճումներին հենվելով:

Այսօր հստակորեն շեշտադրվում է երեխայի ուսուցման և դաստիարակության մարդասիրական բնույթը: Իհարկե, ուսուցման գործընթացում դեռ պահպանվում են ուսուցման ավանդական ձևերի և յուրաքանչյուր աշակերտի ուսումնաճանաչողական գործունեության անհատական կազմակերպման եղանակների միջև եղած հակասությունները, ինչպես նաև տարբերակված կրթության և կրթության բովանդակության ու տեխնոլոգիաների ընդհանրության հիմնախնդիրը:

Նշված հիմնախնդիրների լուծման կարևոր ուղիներից է մանկավարժական նոր տեխնոլոգիաների ներդրումը: Հանրակրթության դպրոցի անցումը ավանդական մանկավարժությունից դեպի հարմարվողականին, նոր մանկավարժական տեխնոլոգիաների ներդրումը պահանջում է ժամանակի և ուսուցչի հատուկ նախապատրաստում: Ապագա մանկավարժին այսօր անհրաժեշտ է կողմնորոշվել ուսուցման՝ գոյություն ունեցող տեխնոլոգիաների մեջ, ծանոթանալ մանկավարժության, հոգեբանության նորագույն նվաճումներին, որոնք ուղղված են արդեն իսկ գոյություն ունեցող տեխնոլոգիաների կատարելագործմանն ու արդիականացմանը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ստեղծմանը:

Անձնային կողմնորոշում ունեցող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները կրթական ողջ համակարգի կենտրոնում դնում են սովորողի անձը, նրա զարգացման համար հարմարավետ պայմանների ապահովումը: Անձնային կողմնորոշում ունեցող տեղնոլոգիաները բնութագրվում են մարդասիրական և հոգեբանավերականգնողական ուղղվածությամբ և հետապնդում են սովորողների ազատ, բազմակողմանի և ստեղծագործական զարգացման նպատակներ:

Անձնային կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաները բացահայտում են այն նոր մոտեցումները, որոնք վերաբերում են մեր արդիականությամ մեջ ինչ և ինչպես սովորեցնելու խնդիրներին: Առաջին հերթին, ուսման բովանդակությունը դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց և ոչ թե սոսկ նպատակ, ակտիվորեն օգտակործվում են ուսուցման խթանման բոլոր հնարավոր միջոցները, տեղի է ունենում ուսուցման տարբերակվածություն:

Անձնային կողմնորոշում ունեցող դասի ընթացքում ոչ միայն գիտելիքներ են մատուցվում, այլև բացահայտվում են սովորողների անհատական առանձնահատկությունները:

Անձնային կողմնորոշում ունեցող դասի առանձնահատկությունները: Անձնային կողմնորոշում ունեցող դասի հիմնական առանձնահատկությունը յուրաքանչյուր սովորողի ինքնատիպությունը հաշվի առնելն է: Դասը նպատակամիտված է աշակերտների ինքնուրույնությունը խթանելուն, նրանց հնարավորություն է ընձեռում հարցեր տալու, վարկածներ և ինքնատիպ գաղափարներ առաջ քաշելու: Կազմակերպում է մտքերի, կարծիքների ու գնահատումների փոխանակություններ, խթանում վարկածներ առաջ քաշելու և ինքնատիպ գաղափարներ արտահայտելու միտումները: Անձնային կողմնորոշում ունեցող դասը հենվում է յուրաքանչյուր աշակերտի ինտուիցիայի վրա: Այն ձգտում է նաև յուրաքանչյուր սովորողի համար ապահովել հաջողության բերկրանքը:

Անձնային կողնորոշում ունեցող դասի ընթացքում ուսուցիչն ու աշակերտը իրավահավասար գործընկերներ են, որպես տարբեր, բայց անհրաժեշտ փորձի կրողներ: Ուսուցչի արհեստավարժությունը երևում է հենց քննարկվելիք հարցին աշակերտների հայտնած կարծիքներին հարգանքով վերաբերվելու և հաշվի առնելու մեջ:

Դասի ընթացքում միջանձնային փոխհարաբերությունները ապահովում են հաղորդակցման զանազան ձևերի օգտագործում:

Վերջին տասնամյակների ընթացքում կրթությունը շատ վերափոխումների միջով է անցել: Այսօր ոչ ավանդական կրթությունը ավելի շատ սովորողների է հասանելի

քան նախկինում: Ժամանակակից մանկավարժությունը սահմանում է ուսուցման գործընթացն անցկացնելու այնպիսի ռազմավարություններ և մոտեցումներ, որոնք համապատասխանում են որակյալ կրթության ապահովման պահանջներին: Արդյունավետ մանկավարժական մոտեցումների կիրառումը օգնում է սովորողներին իրագործելու իրենց կրթական ներուժը, իսկ ուսուցիչներին հնարավորություն է տալիս դիտելու իրենց աշակերտների առաջընթացը:

Շատ հաճախ թյուրըմբռնում է լինում, և ինտերակտիվությունը շփոթում են ոչ ավանդական կրթության հետ, ինչը սխալ է: Ոչ ավանդական ուսուցումը առանձնահատուկ կրթատեսակ է առանձնահատուկ խնդիրներ լուծելու համար[5]:

Ոչ ավանդական կրթական համակարգը ձևավորվեց ի պատասխան այն մարտահրավերների, որոնք եղած կրթական համակարգին ներկայացրեց նոր դարաշրջանը, որոնց համար այն չէր կարողանում գտնել համապատասխան լուծումներ: Ոչ ավանդական կրթական համակարգը ստեղծվեց որպես բացերը լրացնող և այլ տիպի քաղաքացի և անհատ ձևավորող համակարգ, որը, սակայն, չէր հավակնում և չի էլ կարող հավակնել ավանդական կրթական համակարգի կողմից տրվող մասնագիտական կրթությունը փոխարինելուն: Ոչ ավանդական կրթության դասընթացների ժամանակ հիմնական աշխատանքը տարվում է անհատ մասնակիցների հետ: Ուսուցողական գործընթացի հիմնական բաղադրիչներից է մասնակիցների անհատական աշխատանքը: Ուսուցման անհատական բաղադրիչը խիստ կարևորելով հանդերձ՝ պետք է նշել, որ ուսուցման ընթացքում հիմնական ուսուցողական գործընթացները կազմակերպվում են՝ հիմնվելով թիմային պատասխանատվության, թիմային ոգու և փոքր խմբերով աշխատանքի վրա: Փոքր խմբերով աշխատանքի առանցքում բազմապիսի վարժություններ են, սակայն որոշակի թեմաների ու խնդիրների քննարկման համար կարող է դիտարկվել նաև առանձին գործիք: Խմբային աշխատանքը կառավարելու, կազմակերպելու և դրա արդյունավետությունն ապահովելու համար առկա են որոշակի հնարներ: Ոչ ավանդական կրթակարգը մեծ դեր ունի դպրոցականների մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացման գործում: Այն դպրոցականներին

[5]https://www.ncbi.nih.gov/books/NBK310920/

հնարավորություն է տալիս մտքերն ազատ շարադրել, ինքնուրույնաբար կատարել վերլուծություններ, քննարկվող նութը ներկայացնել իր սեփական տեսակետի հիման վրա, համակողմանիորեն դիտարկել երևույթներն ու իրավիճակները: Ոչ ավանդական կրթության կարևորությունն ու նշանակությունը ավանդական կրթական համատեքստում ուսումնասիրելու համար կարելի է անցկացնել Դանիել Վարուժանի «Զոն» բանաստեղծության ուսուցումը ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներով:

Դասարան-8-րդ

Առարկա-Գրականություն

Թեմա-Դանիել Վարուժքնի «Զոն» բանաստեղծությունը

Դասարանը բաժանել երկու խմբի: Առաջին խմբում դասն անցկացնել ավանդական ձևաչափով, իսկ երկրորդ խմբում՝ ոչ ավանդական:

Ավանդական ուսուցման համակարգով իրականացված դաս: Աշակերտներին նախօրոք հանձնարարվել էր բանաստեղծությունն անգիր սովորել: Նրանք պիտի սովորեն արտասանել «Զոնը», ներկայացնել ստեղծման պատմությունը, որն է հանդիսացել գրելու շարժառիթը, պատասխանել դասի վերջում գրված հարցերին: Դասի վերջում հարկավոր է ամփոփել դասը և հանձնարարել կրկնել նախորդ անցածը ու անգիր սովորել լրացուցիչ որևէ բանաստեղծություն:

Ոչ ավանդական ուսուցմամբ դասապրոցեսի անցկացումը: Աշակերտներին հանձնարարել հատվածաբար կարդալ ստեղծագործությունը, ինքնուրույնաբար վերլուծել: Ամբողջական ընթերցումից հետո սովորողները պիտի փորձեն պատասխանել հետևյալ հարցերին՝

Ի՞նչ գույներ տեսար բանաստեղծությունն ընթերցելիս:

Ո՞ր երաժշտության հետ կասոցացնես այն:

Ո՞ր կտավն է պատկերում ստեղծագործությունը:

Աշակերտներին կտրվի հնարավորություն համացանցից ներբեռնել Այվազովսկու փոթորկահույզ կտավները, Բեթհովենի, Շոպենի մեղեդիները: Այսպիսով կմեկտեղվեն համաշխարհային հնչեղություն ունեցող գործերը:

Այդ ամենից հետո կիրառել «Տեսանկյուններ» վարժությունը: Նախօրոք կազմել 3-4 հարցեր.

1. «Զոն» բանաստեղծությունը նախընտրեցի՞ք:
2. Բանաստեղծությունն ընթերցելուց հետո կարմիր գույն տեսա՞ք:
3. Կա՞ր նմանություն «Վահագնի ծնունդի» հետ:
4. Կփոխեի՞ք վերջին երկու տողը:

Դասասենյակի 4 սեղանների վրա դնել «այո», «ոչ», «չգիտեմ», «ես ուզում եմ ինչ-որ բան ասել»՝ չորս տարբեր տեսանկյուններ ներկայացնելու համար: Պետք է հնչի հարցը և աշակերտներից յուրաքանչյուրը նստի այն սեղանի մոտ, որն արտացոլում է իր պատասխանը: Ամեն հարցից հետո աշակերտները կարող են «փոխել» իրենց սեղանը: Բոլորին հնարավորություն պետք է տրվի հայտնելու իրենց տեսակետը:

Դասի վերջում ամփոփել բանաստեղծության բովանդակությունը: Մեկ անգամ ևս ընթերցել «Զոնը» և արդեն սովորողներին հնարավորություն տալ այլ գույներ, պատկերներ տեսնելու՝ մտորելով հիմնական գաղափարի շուրջը:

Նոր մոտեցումը կտա իր արգասիքը. կյուրացվի թեման, երեխաները կճանաչեն արվեստի տարբեր բնագավառների նշանավոր դասականներին, կկառուցեն գրագետ խոսք: Դասարանում պետք է տիրի փոխադարձ վստահություն և ձևավորված առանձնահատուկ կարծիք, ապրելու և արարելու բուռն ձգտում: Դասերից հետո ամբողջ դասարանին պետք է հանձնարարել լրացնել թեմային վերաբերվող փոքրիկ հարցաշարը: Առաջադրանքը կատարելուց հետո ստուգել և ամփոփել ստացված արդյունքները:

Ոչ ավանդական ուսուցմամբ իրականացված դասն ավելի արդյունավետ կլինի, աշակերտները կունենան հիմնավոր գիտելիքներ և կկարողանան ինքնուրույնաբար վերլուծել բանաստեղծությունը:

Ի մի բերելով Դանիել Վարուժանի ստեղծագործությունների ուսուցման վերաբերյալ դիտարկումները կարելի է առանձնացնել ավանդական և ոչ ավանդական կրթական ձևաչափերի առավելություններն ու թերությունները (տե՛ս աղյուսակը):

	Ավանդական կրթություն	Ոչ ավանդական կրթություն
Առավելությունները	Համակարգված է, ունի հստակություն, դասի ավարտին պարզ երևում է աշակերտի գիտելիքների պաշարը, կարողությունները: Ունի գնահատման կայուն համակարգ	Աշակերտը կարող է ներկայացնել նյութը այնպես, ինչպես կցանկանա: Ստեղծագործաբար մոտենալ քննարկվող երևույթին, իրադրությանը: Բացահայտել այնպիսի կարողություններ ու հմտություններ, որոնք մինչև այդ անհայտ էին:
Թերությունները	Աշակերտը պետք է հանձնարարված նյութտ սովորի այնպես, ինչպես կա: Չի կարող մտքերն ազատ շարադրել, չունի ինքնավստահություն, ինքնահիրացում: Դասագրքի շրջանակից դուրս չեն գալիս և աշակերտը մեխանիկորեն սերտում է թեման:	Ոչ մի փաստաթղթով չի ամրագրվում աշակերտի ստացած գիտելիքները: Չունի հստակ սահմանված ժամանակացույց, համակարգվածություն

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով հայ գրականության դասերին Դանիել Վարուժանի ստեղծագործությունների արդյունավետ ուսուցման հարցերը, կարելի է ասել, որ ոչ ավանդական կրթակարգը սովորողների շրջանում հետաքրքրություն և ոգևորվածություն կարող է առաջացնել, խթանել ինքնուրույն մտածողության զարգացմանը և հնարավորություն տալ անկաշկանդ, ստեղծագործաբար վերլուծել յուրաքանչյուր երևույթ, համատեղել անհամատեղելին, նոր գաղափարներ առաջ քաշել և հավատալ սեփական ուժերին։

Ինքնուրույն մտածողության զարգացման շնորհիվ դպրոցականներն ազատ կերպով կկարողանան արտահայտել մտքերը, կձևավորվեն ստեղծագործական կարողությունները, կհարստանա նրանց բառապաշարը, կընդլայնվի մտահորիզոնը։ Ուսուցիչն ուսումնական գործընթացում պետք է կարևորի ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումը, այլ ստեղծի խնդրահարույց իրավիճակներ, որոնց ժամանակ սովորողը կարող է դատողություններ անել որևէ խնդրի շուրջ, ուղիներ մշակել, բացահայտումներ ու եզրահանգումներ կատարել։ Սովորողի մտածողությունը զարգամում է, երբ նա դասի ակտիվ մասնակից է։ Ոչ ավանդական կրթությունը ձևավորում է դպրոցականների ինքնուրույն մտածողությունը և զարգացնում ստեղծագործական կարողությունները՝ նպաստելով սովորողների ինքնաճանաչմանը, ինքնաարտահայտմանը, ինքնակատարելագործմանը։ Գրականության ուսուցման ընթացքում կարևորվում է յուրաքանչյուր սովորողի անհատականությունը։

Ոչ ավանդական կրթության շնորհիվ լրացվում են ավանդական կրթության բացերը։ Այն նաև լավ տարբերակ է ուսուցիչների համար՝ հմտորեն օգտվելու ժամանակակից տեխնոլոգիաներից, նոր մեթոդներով ու հնարներով իրականացնելու դասապրոցեսը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա.,Պրոբլեմային ուսուցումը և ուսուցիչը, Երևան, «Լույս» հրատ., 1985, էջ 236
2. Էդուարդ դե Բոնո, Ոչ շաբլոն մտածողության մասին, Երևան, 1982, էջ 101
3. Թադևոսյան Ա., Լավչյան Զ., Մինասյան Ա., Ոչ ֆորմալ կրթության ներածություն, Երևան, 2012, էջ 120
4. Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, «Լույս» հրատ., 1976, էջ 443
5. Հայ գրականություն
6. Հայրապետյան Դ. Ռ., Իմացական գործընթացների պրակտիկում, Երևան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 190
7. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, Դասագիրք բուհերի համար, Երևան, «Զանգակ-97» , 2005, էջ 372
8. Մախչանյան Հ. Մ., Մանուկյան Ալ. Ս., Պրակ I, ուսումնական ձեռնարկ, Երևան., 1997, էջ 202
9. Մանկավարժական բառարան, Գիրք Գ, Երևան, 2018, էջ 165
10. Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ., 1977, էջ 125
11. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1958, էջ 620

Էլեկտրոնային աղբյուրներ

1. https://fliphtml5.com/fumf/uybc
2. http://www.irtek.amviews/act.aspx?aid=37587
3. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100589
4. http://parents.disabilityinfo.am/%B4%D5%A1%D6%80/
5. http://www.youth.am/media/2020/08/21553.pdf
6. http://boon.am/andragogia-6/
7. https://ccd.armla.am/wp-content/uploads/2019
8. https://itguide.eif.am/index.php?id=447&lang=1#top
9. https://thebridgestudio.ru/hy/yan-amoskomenskii-pedagogicheskie
10. https://armineab.wordpress.com/2014/04/11/%D5%A4%D5%BA
11. https://www.quizalize.com/blog/2018/02/23/teaching-strategies